



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 04 » *փետրվարի* 2019թ.

№ *2/329-Վ*

Հ Ր Ա Մ Ա Ն

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ Վ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի թիվ 13/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները խախտելու, տրված հանձնարարականները և ընդունված որոշումները ոչ պատշաճ ձևով կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության թիվ 3 /Կենտրոնի/ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Գրիգոր Զիլֆիի Խաչատրյանին, կազմակերպման և հսկողության վարչության հարկային հսկողության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Վիգեն Ավետիսի Ավետիսյանին հայտարարել «ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ»:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 2/4/2019 16:12:38 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Գ.ԱՆԱՆՅԱՆ